330 Ունայնություն է աշխարհը այս սին,

1. Ունայնություն է աշխարհը այս սին,
Ոչ ոք չասաց ինձ նույնիսկ այդ մասին,
Օրերը եկան, անցան շատ իզուր,
Երկրում ապրում եմ ինչպես օտար հյուր:
Ով հոգի ծախված
Ու դատապարտված,
Աշխարհի կողմից եղար դու խաբված:

2. Զղջման արցունքով ելա Գողգոթա,
Հիսուսին տեսա ու ծնկի եկա,
Աշխարհը՝ ունայն, երկինքն է հույսս.
Գնեց Իր արյամբ ինձ Տեր Հիսուսը:
Հոգիս երկնային
Երկինք կգնա,
Մարմինս հող է, հողին կդառնա:

3. Երկնքի դուռն է բացել իմ Տերը,
Այնտեղ պիտ գնան Տիրոջ սուրբերը,
Հրաման կգա շուտով երկնքից,
Հրավեր ունեմ իմ Տեր Հիսուսից:
Հոգիս երկնային
Երկինք կգնա,
Մարմինս հող է, հողին կդառնա:

4. Աշխարհ դու անզոր, Տերս քեզ հաղթեց,
Սև ճիրաններից հոգիս ազատեց,
Մարդի՛կ, դուք բացեք ձեր քար սրտերը,
Փշրված սիրտ է սիրում մեր Տերը:
Հոգիս երկնային
Երկինք կգնա,
Մարմինս հող է, հողին կդառնա: